

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ ր ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Ղախիչ՝ 77771

Տպագրական 8 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.12.2019

Հանձնված է տպագրության

15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)
2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ՓՈՐՃԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Առնուդ Վարդանյան

*ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, ԵՊՀ քրեական դատավարության
և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու համար քրեական վարույթն իրականացնող մարմինը կայացնում է՝ ա) ստացիոնար փորձաքննությունն նշանակելու մասին որոշում, բ) փորձաքննություն անցկացնելու համար անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացնելու մասին որոշում: Վերջինն անձի ազատության իրավունքի հարկադիր սահմանափակման նկատմամբ նախնական դատական վերահսկողության կառուցակարգ գործադրելու հիմք է:

Անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հիմք է այն փաստական տվյալների ամբողջությունը, որը ողջամիտ կասկած է առաջացնում անձի՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելու պահին կամ քրեական վարույթի ընթացքում հոգեկան հիվանդությամբ տառապելու հնարավորության մասին: Որպես այդպիսին կարող են դիտվել անձի՝ հոգեկան հիվանդությամբ նախկինում տառապելու վերաբերյալ բժշկական պատմագրերը, էպիկրիզները, տարաբնույթ բժշկական փաստաթղթերը, հոգեբուժական հաստատություններում հաշվառված լինելը և այլն: Ինչպես նկատում ենք, նշված հիմքերի ցանկը սպառնիչ թվարկել հնարավոր չէ, սակայն բոլոր դեպքերում դրանք պետք է ողջամտորեն վկայեն անձի՝ հնարավոր հոգեկան հիվանդությամբ տառապելու մասին:

ՀՀ-ում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք դեպքերում փորձաքննության անցկացման համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու համար որպես ինքնուրույն հիմք են վկայակոչվում անձի կողմից տարօրինակ հանգամանքներում ենթադրաբար կատարված արարքի փաստական հանգամանքները կամ դրանց կապակցությամբ անձի տված պարզաբանումները: Այսպես, օրինակ՝ թիվ ԵԱՔԴ/0020/14/16 գործով փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու վերաբերյալ միջնորդությունը քննիչը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Նախաքննության ընթացքում Վ.Ն.-ի կողմից որպես կասկածյալ և մեղադրյալ տված ցուցմունքները հիմք են տալիս ենթադրելու, որ վերջինս հնարավոր է տառապում է հոգեկան հիվանդությամբ, որպիսի հանգամանքը հնարավոր է պարզել միայն ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության պայմաններում»: Այսինքն՝ ներկայացված միջնորդությամբ քննիչը դատարանից հայցել է անձի ազատության իրավունքի սահմանափակման թույլտվություն՝ հիմք ընդունելով փորձաքննության ենթարկվողի հոգեկան առողջության վերաբերյալ սեփական պատկերացումները: Այնինչ մեր համոզմամբ առանց մասնագիտական բժշկական կարծիքի նշվածը չէր կարող լինել բավարար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու միջնորդություն հարուցելու համար:

Ավելին, պետք է նշել, որ նման դեպքերում նաև անհասկանալի է քննիչի կողմից միանգամից առավել խիստ եղանակով անձի իրավունքները սահմանափակող փորձաքննության անցկացման ձևի ընտրությունը: Այդ պատճառով որոշ դեպքե-

րում դատարանները նաև մերժում են ստացիոնար ձևով փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ կից չեն ներկայացվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհաստատեին մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված՝ ամբուլատոր (արտահիվանդանոցային) ձևով փորձաքննության նշանակման և կատարման անհնարիությունը¹:

Խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված մոտեցմամբ քննիչը միայն նշանակում էր փորձաքննություն, իսկ փորձաքննության անցկացման ձևի որոշումը փորձագետի ընտրությանն էր թողնված: Դրա հիմքում ընկած էր ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի՝ 1971 թվականի մարտի 16-ի՝ «Քրեական գործերով դատական փորձաքննության մասին» որոշումը: Դրա 7-րդ կետում նշվում էր, որ փորձաքննության անցկացման ամբուլատոր կամ ստացիոնար եղանակի որոշումը փորձագետի իրավասությունն է: Այն հասկանալի պատճառներով քննադատության էր ենթարկվում տեսական գրականությունում², քանի որ ինչպես փորձաքննության նշանակման, այնպես էլ դրա կազմակերպման դատավարական հարցերը լուծում է քրեական վարույթն իրականացնող մարմինը, այլ ոչ թե փորձագետը:

Այնուամենայնիվ, թեև փորձաքննության անցկացման ձևի բացառիկ ընտրությունն իրականում վերապահված է քննիչին, սակայն մեր համոզմամբ ևս այն պետք է ունենա մասնագիտական հիմնավորում: Ստացիոնար փորձաքննության անցկացման ձևի ընտրությունը պետք է լինի որպես վերջին միջոց (last resort), երբ անձի հոգեկան վիճակի պարզումը փորձաքննության այլ՝ անձի իրավունքների նկատմամբ առավել նվազ միջամտություն դրսևորող ձևի կիրառմամբ անցկացնելը կլինի անհնարին:

Հիմնավորումը կարող է լինել ինչպես մասնագիտական կարծիքի, այնպես էլ քննիչի սենյակում անցկացված փորձաքննության ձևով: Ընդ որում, հարկ է նկատել, որ տեսական գրականության համաձայն՝ քննիչի աշխատասենյակում փորձաքննության անցկացման ձևը հենց նախատեսված է վերոնշյալ հանգամանքների մասին մասնագիտական բժշկական նախնական կարծիք ստանալու համար՝ հաշվի առնելով, որ մեկ փորձագետի կողմից փորձաքննության ենթարկվող անձի հետ կարճաժամկետ զրույցը չի կարող հնարավորություն տալ համապարփակ տեղեկատվություն ստանալ անձի հոգեկան առողջության վերաբերյալ³: Բացի այդ, հարկ է նկատել, որ ՔԴՕ նախագծի ընդունման պարագայում մասնագիտական հիմնավորում ստանալու այլընտրանքային և արդյունավետ եղանակ կարող է դիտվել նախագծի 59-րդ հոդվածով նախատեսված կարգավորումն այն մասին, որ փորձագետը կարող է ներգրավվել վարույթին ապացուցողական կամ այլ դատավարական գործողությունների կատարմանն աջակցելու նպատակով: Այդ համատեքստում վարույթն իրականացնող մարմինը ենթադրաբար հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին կարող է մասնակից դարձնել համապատասխան փորձագետի՝ լրացուցիչ պարզաբանում ստանալով նաև այն մասին, թե ելնելով անձի վիճակից՝ ի՞նչ ձևի փորձաքննություն է խորհուրդ տրվում անցկացնել կոնկրետ գործով:

¹ Տե՛ս, ի թիվս այլնի, Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի թիվ ԵԱՆԴ/0002/15/17, 2017 թվականի նոյեմբերի 2-ի թիվ ԵԱՆԴ/0007/15/17, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 18-ի թիվ ԵԴ/0041/15/18 որոշումները:

² Տե՛ս **Корнуков В.М.**, Меры процессуального принуждения в уголовном судопроизводстве, Саратов, изд. Саратовского университета, 1978, էջեր 125-126:

³ Տե՛ս **Федулов О.И.**, Судебная психиатрия, Саратов, Саратовский государственный социально-экономический университет, 2013, էջ 18; **Жариков Н.М., Морозов Г.В., Хритинин Д.Ф.**, Судебная психиатрия, учебник для вузов, Москва, Норма, 2008, էջ 27:

Անդրադառնալով փորձաքննության անցկացման համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու պայմաններին՝ հարկ է նշել, որ դրանք այն հանգամանքներն են, որոնց բացակայությունը ոչ իրավաչափ է դարձնում անձին բժշկական հաստատությունում տեղավորելը:

Առաջին հիմնական պայմանը քրեական գործ հարուցելու մասին որոշման առկայությունն է: Թեև ՀՀ ՔՂՕ-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև քրեական գործի հարուցումը կարող է նշանակվել փորձաքննություն, սակայն, ինչպես արդեն նշել ենք, անձի հոգեկան առողջության վերաբերյալ փորձաքննության պարզման ենթակա հանգամանքները դուրս են գտնվում քրեական գործի հարուցման փուլում լուծման ենթակա հանգամանքների շրջանակից: Այսինքն՝ անձի հոգեկան վիճակի մասին պատկերացում կազմելու համար փորձաքննության նշանակումը դուրս է գտնվում քրեական գործի հարուցման հարցը որոշելու համար նյութերի նախապատրաստման փուլից՝ հաշվի առնելով, որ այդ փորձաքննության արդյունքները որևէ կերպ չեն կարող կանխորոշել քրեական գործ հարուցելու կամ մերժելու հարցը: Ուստի, անձի հոգեկան առողջության վերաբերյալ փորձաքննությունը կարող է նշանակվել միայն քրեական գործ հարուցելուց հետո:

Հաջորդ պայմանը վերաբերում է փորձաքննության ենթարկվող անձի դատավարական կարգավիճակին: ՀՀ ՔՂՕ-ի 280-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննության ենթարկվելու համար բժշկական հաստատությունում կարող են տեղավորվել կասկածյալները, մեղադրյալները և այն անձինք, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավել որպես մեղադրյալ: Այսինքն՝ գործող քրեադատավարական կարգավորումից հետևում է, որ բժշկական հաստատությունում կարող են տեղավորվել ոչ միայն մեղադրյալի, այլ նաև կասկածյալի դատավարական կարգավիճակ ունեցող, նույնիսկ փաստացի դատավարական կարգավիճակ չունեցող անձինք, որն օրենսդիրը պայմանավորում է նրանց հոգեկան վիճակով:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորմամբ նախատեսված մոտեցման կապակցությամբ մենք ունենք մտահոգություններ և գտնում ենք, որ փորձաքննության ենթարկվելու համար բժշկական հաստատությունում տեղավորվող անձը պետք է ունենա առնվազն մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում իրավակիրառողները առաջնորդվում են նշված մոտեցմամբ¹, ինչը կարծում ենք ունի որոշակի օբյեկտիվ հիմքեր:

Նախ, քրեական դատավարությունում անձի ֆիզիկական ազատության իրավունքի սահմանափակումը երբևէ չի կարող լինի վերացական: Մասնավորապես, քրեական դատավարությունում անձի ազատության իրավունքի սահմանափակմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումը թույլատրելի է միայն քրեական օրենքով արգելված արարքի կատարման ենթադրության առկայության պայմաններում: Այլ կերպ, անձի ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու պետության լիազորությունն ածանցվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարման ենթադրությունից: Ընդ որում, ի տարբերություն անձի ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի այլ միջոցների, միայն անձի ձեռքակալման դեպքում է, որ քրեական օրենքով արգելված արարք կատարելու ենթադրությունը էականորեն ցածր աստիճանի վրա է գտնվում, քանի որ այն կրում է նախնական, խիստ կարճաժամկետ և կանխարգելիչ բնույթ: Մնացած բոլոր դեպքերում անձի ազատության իրավունքի սահմանափակման համար քրեական օրենքով արգելված արարք կատարելու ենթադրության աստիճանն ավելի բարձր է, քանի որ այդ դեպքերում կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցներով անձի անձնական ազատության և ան-

¹ Տե՛ս, ի թիվս այլնի, թիվ ԼԴ1/0041/01/15, ՏԴ/0043/01/18, ՏԴ/0054/01/18, ՍԴ/0068/01/18 գործերը:

ծեռնմխելիության իրավունքների նկատմամբ պետության միջամտության մակարդակն ավելի բարձր աստիճանի վրա է: Ուստի, անձի ֆիզիկական ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի այդպիսի միջոցների կիրառման դեպքում պահանջվում է քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքի կատարման ապացույցների բավարար համակցություն, որի առկայության պարագայում կայացվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում:

Բացի այդ, եթե քննարկվում է անձի անմեղսունակության որոշման համար փորձաքննություն նշանակելու հարցը, ապա պետք է փաստել, որ անձի անմեղսունակությունը որոշվում է ռետրոսպեկտիվ կարգով (անցյալ ժամանակում) և կարող է վերագրվել միայն կոնկրետ քրեական օրենքով արգելված արարքին, այն վերացական բնույթ չունի¹: Այսինքն՝ փորձաքննություն կարող է նշանակվել, երբ մինչ այդ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ առնվազն կարելի է հետևություն անել, որ փորձաքննության ենթարկվող անձը ենթադրաբար կատարել է քրեական օրենքով արգելված հենց այն արարքը, որի կապակցությամբ անհրաժեշտ է որոշել նրա մեղսունակությունը: Դրանով է նաև պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ ՔՂՕ-ի 108-րդ հոդվածի 2-րդ կետը դատահոգեբանական կամ դատահոգեբուժական փորձաքննության պարտադիր նշանակումը վերագրում է միայն մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձին:

Միևնույն ժամանակ, եթե նույնիսկ ընդունելի համարենք կասկածյալին փորձաքննության ենթարկելու համար բժշկական հաստատություն տեղավորելը, ապա անորոշ է մնում նրա դատավարական կարգավիճակը՝ առավելագույն տասնօրյա ժամկետը (ծերբակալման դեպքում՝ եռօրյա ժամկետը և ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու դեպքում՝ յոթօրյա ժամկետը) անցնելուց հետո՝ նկատի ունենալով, որ անձի հոգեկան առողջության վերաբերյալ ստացիոնար փորձաքննությունը մասնագիտական գրականության համաձայն տևում է ավելի քան տասը օր²:

Ինչ վերաբերում է հոգեկան վիճակի հետևանքով առանց պաշտոնական դատավարական կարգավիճակ տալու անձին բժշկական հաստատություն տեղավորելու օրենսդրական կարգավորմանը՝ պետք է փաստել, որ հնարավոր հոգեկան հիվանդության առկայության ենթադրությունն ինքնին չի կարող արգելք հանդիսանալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու համար: Այսպես, ենթադրենք անձը ձևացնում է, որ հոգեկան հիվանդությամբ է տառապում. արդյո՞ք դա խոչընդոտ է նրան որպես մեղադրյալ ներգրավելու համար: Ենթադրվող հոգեկան հիվանդությունը կարող է հնարավոր խոչընդոտ լինել ոչ թե անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու, այլ նրան փաստացի մեղադրանք առաջադրելու համար, երբ այդ գործընթացի ժամանակ, օրինակ՝ անձն իրեն տարօրինակ պահի և վտանգ ներկայացնի այլ անձանց համար: Նման պայմաններում, միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ ընդունելի է համարվում անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել նրա իրավական շահերը ներկայացնող իրավաբանին կամ խնամակալին³: Գործող կարգավորումների շրջանակներում ՀՀ ՔՂՕ-ի 29-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ընթացակարգի կիրառմամբ մեղադրանք առաջադրելու մասին որոշումը կարող է ծանոթաց-

¹ Տե՛ս **Шареева Р.М.**, Проблемы применение принудительных мер медицинского характера в уголовном процессе. Диссертация на соискания ученой степени к.ю.н., УФА, 2005, էջ 110:

² Տե՛ս **Ս. Թադևոսյան**, Ղատական հոգեբուժություն, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 15:

³ Տե՛ս X v. United Kingdom գործով Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ 1980 թվականի հուլիսի 16-ի որոշումը, զանգատ թիվ 6998/75, հղումն ըստ՝ N.Jayawickrama, The Judicial Application of Human Rights Law, The United Kingdom, Cambridge University Press, 2002, էջ 400:

ման ներկայացվել առողջական վիճակի պատճառով ստորագրելու հնարավորությունից զրկված անձի պաշտպանին, որի պարտադիր մասնակցության հետ կապված հիմնահարցերը կքննարկենք ստորև:

Մինչ այդ, ամփոփելով վերոգրյալը, փաստենք, որ, մեր համոզմամբ, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը փորձաքննության ենթարկելու նպատակով նրան բժշկական հաստատությունում տեղավորելու պարտադիր պայման է:

Անդրադառնալով պաշտպանի մասնակցության ապահովմանը՝ նշենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են մեղադրյալի ցանկության դեպքում ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցությունը քրեական վարույթին, եթե դրա անհրաժեշտությունը, ի թիվս մեղադրյալի անվճարունակության, պայմանավորված է նաև արդարադատության շահով¹: Սակայն, որոշ դեպքերում, երբ մեղադրյալի համար դժվար է կամ անհնարին միանձնյա կազմակերպել իր պաշտպանությունը, ապա միայն արդարադատության շահն ըստ էության բավարար է պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն «արդարադատության շահի» ներքո հաշվի է առնում վերագրվող հանցագործության ծանրության աստիճանը, գործի բարդության աստիճանը, մեղադրյալի անձնական դրությունը՝ դատավարության լեզվին, տվյալ պետության իրավական համակարգին տիրապետելու, ինքնուրույն իր պաշտպանությունը կազմակերպելու դժվարությունների համատեքստում²:

Նշվածի լույսի ներքո եվրոպական կոնվենցիայի անդամ պետությունների կողմից առանձին դեպքերում պաշտպանի պարտադիր մասնակցության ապահովման պահանջը միտված է հանրային շահի պաշտպանությանը հավասարազոր պաշտպանություն տրամադրելուն նաև մասնավոր շահի համար:

ՀՀ ՔՂՕ-ում պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքերն ամրագրված են 69-րդ հոդվածի 1-ին մասում, որոնցից մեզ առավել հետաքրքրում են 2-րդ և 3-րդ կետերը: Այսպես, 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է այն դեպքում, երբ կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, ֆիզիկական կամ հոգեկան այլ պակասությունների հետևանքով:

Այսինքն՝ վերոնշյալ կետով օրենսդիրը պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքը պայմանավորել է ոչ թե ընդհանուր հատկանիշով, այն է՝ ինքնուրույն իր պաշտպանության իրավունքն իրականացնելու դժվարությամբ, այլ որոշակի հատուկ հանգամանքներով, որոնք կարող են հաստատվել ոչ այլ կերպ, քան համապատասխան բժշկական փաստաթղթերով:

Համանման կերպով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ամրագրում է, որ քրեական գործով վարույթին պաշտպա-

¹ St' u Granger v. the United Kingdom գործով 1990 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 11932/86, կետ 46:

² St' u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Benham v. the United Kingdom գործով 1996 թվականի հունիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 19380/92, կետ 60, Pham Hoang v. France գործով 1992 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13191/87, կետ 40, Zdravko Stanev v. Bulgaria գործով 2012 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 32238/04, կետ 38, Quaranta v. Switzerland գործով 1991 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 12744/87, կետ 33:

նի մասնակցությունը պարտադիր է այն դեպքում, երբ կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում, որպիսի հանգամանքը ևս կարող է հաստատվել ոչ այլ կերպ, քան համապատասխան բժշկական փաստաթղթերով:

Արդյունքում ստացվում է, որ համապատասխան բժշկական եզրակացության բացակայության պայմաններում հնարավոր հոգեկան հիվանդության առկայությունը ստուգելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու գործընթացին պաշտպանի մասնակցությունն օրենքի ուժով պարտադիր չէ: Այդ կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ որպես կանոն փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հարցը քննարկելիս պաշտպանի մասնակցությունը պարտադիր չի համարվում: Այսպես օրինակ՝ թիվ ԵԱՔԴ/0011/14/16, ԵԱՆԴ/0030/01/15 և մի շարք այլ գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու միջնորդության քննությանը պաշտպան չի մասնակցել:

Մինչդեռ պետք է փաստել, որ Միավորված ազգերի կազմակերպության՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 6-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ անձի անմեղսունակ լինելը վիճահարույց է, ապա պաշտպանության իրավունքը պետք է լինի երաշխավորված: Այդ համատեքստում պետք է արձանագրել, որ անձի՝ փորձաքննության նշանակման համար հիմք հանդիսացած հոգեկան հիվանդությամբ տառապելու ենթադրությունն ինքնին վկայում է, որ նրա համար պետք է դժվար լինի ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը: Ուստի, փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու միջնորդության քննությանը պաշտպանը պետք է ունենա պարտադիր մասնակցություն: Այլ կերպ, այն պետք է լինի պարտադիր պայման փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հարցը քննարկելիս:

Միևնույն ժամանակ, նշենք, որ ՀՀ-ում փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու վերաբերյալ դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուժով փորձաքննության ենթարկվելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու պարտադիր պայման է համարվում նաև անձին բժշկական հաստատությունում պահելու ժամանակահատվածում նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը, որպիսի մոտեցման իրավաչափությունը առանձին ուսումնասիրության առարկա է:

Այսպիսով, ամփոփելով վերը քննարկված հարցերը՝ կարծում ենք, որ տեսական գրականությունում համակողմանիորեն չուսումնասիրված փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու ընթացակարգին առնչվող օրենսդրական կարգավորումները ենթակա են վերանայման և հստակեցման՝ անձի ազատության իրավունքի երաշխիքների արդյունավետ պաշտպանությունը գործնականում ապահովելու համար:

ОСНОВАНИЯ И УСЛОВИЯ ПОМЕЩЕНИЯ ЛИЦА В МЕДИЦИНСКОЕ УЧРЕЖДЕНИЕ ДЛЯ ПРОИЗВОДСТВА ЭКСПЕРТИЗЫ

Арнольд Варданян

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

В представленной статье обсуждаются концептуальные особенности помещения лица в медицинское учреждение для производства экспертизы и представляется круг соответствующих оснований и условий. Автор проанализировал основные проблематические вопросы связанные с производством помещения лица в медицинское учреждение для производства экспертизы. Автор излагает причины необходимости реформирования правовых норм, касающихся помещения лица в медицинское учреждение для производства экспертизы.

GROUND AND CONDITIONS OF PLACING A PERSON IN A MEDICAL INSTITUTION FOR IMPLEMENTATION OF EXAMINATION

Arnold Vardanyan

PHD Student at the YSU Chair of Criminal procedure and Criminalistics

In the submitted article, the author discusses the conceptual peculiarities of placing a person in a medical institution for implementation of examination and presents a framework of relevant grounds and conditions. The author analyzes a number of problematic issues related with the procedure of placement of a person in a medical institution for implementation of examination. The author provided justifications for the necessity to reform the legal regulations concerning the procedure of placing a person in a medical institution for implementation of examination.

Բանալի բառեր – բժշկական հաստատությունում տեղափորում, դատավարական կարգավիճակ, պաշտպանի պարտադիր մասնակցություն

Ключевые слова: помещение в медицинское учреждение, процессуальный статус, обязательное участие адвоката

Key words: placement in a medical institution, procedural status, compulsory participation of a lawyer